ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Աշխատանքի անվանումը	*ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ*
Ընդհանուր նկարագրություն	*Անհրաժեշտ է՝* ✓ նախագծերը համաձայնեցնել շահագրգիռ մարմինների և ինժեներական ենթակառուցվածքների մատակարար կազմակերպությունների հետ, ✓ ինժեներական ենթակառուցվածքների մատակարար կազմակերպությունների կողմից ձեռք բերել տեխնիկական պայմաններ և դրանք ներառել նախագծային փաստաթղթերում, ✓ հիմնանորոգել հանդիսության սրահը,
Ներկայացվող հիմնական պահանջներ, տեխնիկական առաջադրանք	Նախատեսվում է 1. Կեչուտ գյուղի հանդիսության սրահը հիմնանորոգելիս նախատեսվում է նորոգել 300քմ մակերեսով տանիք, 32,5 քմ մակերեսով խոհանոցը, կառուցել ջեռուցման նոր համակարգ, նորոգել 2 սանհանգույցները /1,89քմ և 5,7քմ/, կոյուղին՝ անհրաժեշտության դեպքում կառուցելով նոր դիտահորեր, տաղավարի մուտքը հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց համար, ըստ գործող շին. նորմերի և անհրաժեշտության՝ նախատեսել հակահրդեհային համակարգ կամ կրակմարիչներ, տաք և սառը ջրամատակարարում, էներգամատակարարում, նորոգել 15,04 քմ նախամուտքը, փոխարինել դռները, սալիկապատել հատակը: Կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանը՝ III կատեգորիա: Նախատեսել Էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումներ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի պայմաններ: -Օբյեկտի հասցեն՝ գ. Կեչուտ, 8 փող. շենք 3, կառուցման տարեթիվը՝ 1980թ., -նպատակային նշանակությանն առնչվող տեղեկատվություն՝ հասարակական նշանակության, տարեկան այցելուներ՝ 1500 մարդ, -գոյություն ունեցող մասնաշենքերի հատակագծային չափերը՝ 273քմ, -հարկայնությունը՝ մեկ հարկանի, -ներքին ինժեներական ցանցերի առկայությունը և փաստացի վիճակը՝ էլ. էներգամատակարարում՝ գործող, սակայն ունի փոխարինման կարիք, սառը և տաք ջրամատակարարում /խողովակներն ունեն փոխարինման կարիք/, գազամատակարարում, -համառոտ տեղեկատվություն նախկինում կատարված հիմնանորոգման ծրագրերի և տեխնիկական վիճակի ուսումնասիրության վերաբերյալ՝ կառուցումից մինչ օրս չի վերանորոգվել, 2022թ. կատարվել է շինության տեխնիկական վիճակի ուսումնասիրություն: Ղեկավարվել երկրաշարժադիմացկունության, էներգախնայողության և էներգաարդյունավետության, հաշմանդամություն ունեցող անձնանց համար մատչելիության, քաղաքացիական պաշտպանության նորմատիվ պահանջներով: Հանդիսությունների սրահի հիմնանորոգման աշխատանքները ուղեկցել նաև դրանց տարածքների բարեկարգմամբ՝ նախատեսել մայթերի, հարթակների անցուղիների սալապատում, կառուցել ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներ, նախատեսել էներգախնայող լուսավորության ցանց՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների կատարման անհրաժեշտությունը: Նշված միջոցառումները ներառել նախագծում և նախահաշվում: ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթեր» շինարարական նորմերի 30-րդ կետի համաձայն շենքերի կամ կառուցվածքների վնասվածության I-II աստիճանի դեպքում դրանք ենթակա են տվյալ տիպի շենքի կամ կառուցվածքի համար նախատեսված նվազագույն մակարդակի վերակառուցման: Քանի որ շենքերը կառուցվել է խորհրդային տարիներին և կառույցների կոնստրուկտիվ լուծումները չեն համապատասխանում սեյսմակայուն (երկրաշարժադիմացկուն) շինարարության արդի նորմերի պահանջներին, անհրաժեշտ է հանդիսությունների սրահների շենքերի վերանորոգման շրջանակներում կատարել նաև ամրացման աշխատանքներ:
Ընդհանուր դրույթներ	Աշխատանքային նախագիծը կազմվում է՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին

	համապատասխան, ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան: Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝ ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները, դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 4 օրինակից և էլեկտրոնային տարբերակներով, ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%): Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝ **-Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր //հատակագիծ /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն/, տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, լիցենզիա /քաղաքաշինական փաստաթղթերի մշակման բնագավառ՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտ/, տեխնիկական վիճակի հետազոտության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/, ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր, **-Նախահաշվային մաս՝** ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ: Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	***Հիմնական պարտականություններ՝*** 1.հետազննման աշխատանքների իրականացում, 2.նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, ***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*** • հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով, • հետազննման ընթացքում իրականացնել շենքերի, դրանց տանիքների առկա վիճակի ֆոտոնկարահանում: ***Նախագծի նկատմամբ պահանջներ*** • Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին: • Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝ ***Համաձայնեցումներ՝***

	• քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական, • նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ, • տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել շինարարական աղբի տեղերը
Նորմատիվային պահանջներ	• Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: • Կիրառելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի N19-Ն և 2009 թվականի ապրիլի 3-ի N35-Ն հրամաններով հաստատված պահանջները: • Ղեկավարվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով: • Ղեկավարվել ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ N128-Ն հրամանի 7-րդ կետի պահանջով (նկուղային հարկի վերազինման, քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցի նախատեսման, կամ գոյություն ունեցող նկուղային հատվածի հիմնանորոգման/վերակառուցման վերաբերյալ դրույթով): • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի, • ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ N 263-Ն հրամանով հաստատված «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.03.2014թ N87-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20-06-2014 Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 04.04.2022թ N06-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 31-03.02-2022 Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ N95-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 31-03--2020 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կամիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N105-Ն հրամանին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 21.06.2022թ N12-Ն «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերին • ՀՀ կառավարության 19.03.2015թ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N596-Ն որոշմանը, • ՀՀ կառավարության 16.02.2006թ «Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սոցիալական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների մատչելիության ապահովման կարգը հաստատելու մասին» N 392-Ն որոշմանը: • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 14.01.2021թ N02-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.06.2022թ N14-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-03.03-2022 «Վարչական և կենցաղային շենքեր» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 19.09.2022թ N22-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-03-2022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ» շինարարական նորմերին,

	• ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 20.05.2022թ N10-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04-2022 «Տանիքներ և տանիքածածկեր» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 08.07.2022թ N 16-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.12.2020թ N 103-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 40-01.02-«Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կամիտեի նախագահի 13.04.2017թ N 56-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2022թ N 17-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13.01-2022 «Գեոդեզիական աշխատանքները շինարարությունում» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 17.08.2022թ N 18-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20-05-2022 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանությունը կոռոզիայից» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 26.08.2022թ N21-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» շինարարական նորմերին, • ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006թ N253-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերին: • Նախագծային փաստաթղթերը մշակելիս անհրաժեշտ է զերծ մնալ ՀՀ տարածքում չգործող նորմատիվ փաստաթղթերի կիրառումից և դա հաշվի առնել նախագծային փաստաթղթերը հաստատելիս: • Նախագծային փաստաթղթերում ներառել պահանջներ՝ • ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 09.02.2023թ N09-Ա հրամանով հաստատված՝ շինարարական արտադրության կազմակերպման պարտադիր՝ թվով 21 միջոցառումների ապահովման և դրանց չկատարման պարագայում նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ, • Ղեկավարվել նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված նույնաբովանդակ մեթոդական ցուցումներով:

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան

Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru

Համայնքի ղեկավար՝ **Վահագն Արսենյան**

Կ.Տ.